

ՀԱՍԱՐԱԿԱՑ ՄՅԱԿԻՆ

Ա Ր Ծ Ի Ի Ե Ա Ն Ի

Թէ կրճքիդ մէջ բարախում է
Հոգի անկեղծ, անկաշառ,
Եւ քո սիրտը միշտ ձգտում է
'Իէպի բարին ու արդար—
Զո՛ւր է յուսալ, գործի՛չ ազնիւ,
Այս աշխարհից անկեղծ վարձ.
'Ի ու չես գտնիլ յարգանք, պատիւ,
Եւ ո՛չ հանգիստ քո խնդրած:

Թէ կոչւած ես դու կեանքի մէջ
Մի նոր շաւիղ հարթելու,
Մաւիղ դէպի լոյսը անշէջ,
'Իէպի արև կենսատու—
'Ի ու մի՛ յուսալ, չարքաշ մշակ,
Սուրբ փոստակիդ հատուցում.
Մարգկանց աչքում ծաղրէ—ծանակ
Ամեն մի վեհ զգացում...

Բայց թէ քո մէջ չը կայ անկեղծ
Սէր դէպի մի վրսեմ գործ.
Աւերիչ ես, որպէս մի ցեց,
Թունաւորող—որպէս օձ.
Թէ պատրաստ ես դու նենգ խօսքով

Պաշտպան կանգնել բըռնուի՞թեան.
 Մերձաւորիդ փոս փորելով՝
 Մատնել նրան դառն անկման...

Յուսած, ո՞վ մարդ, և լիալոյս
 Դու քեզ խնդրի՛ր դափնիներ.
 Դարուս ոգին անտարակոյս
 Կ'արդարացնէ քո յոյսեր...
 Կը վայելես գու փտուք, հռչակ,
 Սև գործքերիդ դրւատում.
 Եւ իբր յալթող—կը կրես պսակ
 Դու միշտ այս նենգ սշխարհում...

1887 թ., 6 օգոստոսի.